Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
դեկտեմբերի 25-ի N 854 - Ա
որոշման

«ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ, ԱՐՑԱԽԻ ԵՎ ՋԱՎԱԽՔԻ ՀԱՅՐԱՋՈՒՐԿ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ»
Ծ Ր Ա Գ Ի Ր

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է Հայ Առաքելական Եկեղեցու ԱՄՆ Արևելյան թեմի Տիկնանց միության աջակցությամբ օգնել ՀՀ մարզերի և Ջավախքի հայրազուրկ երեխաներին՝ տարեկան երկու անգամ տրամադրելով դրամական հատկացումներ, մեղմել սոցիալական լարվածությունը և նպաստել աղքատության կրճատմանը: Ներկայումս ծրագրում ընդգրկված են 700 երեխաներ:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում («Բարեգործության մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 16-րդ հոդված):
3.	Բարեգործը	Հայ Օգնության Ֆոնդ (Նյու Յորքի գրասենյակ), Հայ Առաքելական Եկեղեցու ԱՄՆ Արևելյան թեմի Տիկնանց միություն, ամերիկահայ ընտանիքներ:
4.	Ծրագիրը կատարողը	ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղ, ք. Երևան, Մ. Խորենացու փող. 22, ՀՎՀՀ 02517115:
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Վայրը՝ ՀՀ մարզեր, Արցախ և Ջավախք: Բնագավառը՝ սոցիալական:
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 73,250,000 դրամ: Որից՝ դրամական օգնություն 67,600,000 դրամ կազմակերպական ծախսեր 5,650,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Սյունիքի, Տավուշի, Շիրակի մարզերում,Արցախում և Ջավախքում բնակվող 700 հայրազուրկ մինչև 18 տարեկան երեխաներ՝

8.	Ծրագրի իրականացման տևողությունը	01.01.2021 – 31.12.2021
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. Դրամական օգնությունը տրամադրվում է տարին երկու անգամ Ընդհանուր գումարը՝ 73,250,000 դրամ: 2. Հայ Առաքելական Եկեղեցու թեմերի հոգևոր սպասավորների հետ համատեղ շահառու երեխաների մկրտության արարողությունների իրականացում: Ծախսեր չեն նախատեսվում: Շահառուների ընտրությունը կատարվում է նրանցից ստացված դիմումների հիման վրա՝ համագործակցելով տեղական իշխանությունների և եկեղեցու թեմերի հետ, ինչպես նաև տնայցերի հիման վրա: Կազմակերպական ծախսեր՝ 5,650,000 դրամ: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 73,250,000 դրամ:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում 01.01.2021 - 31.12.2021 թվականի ընթացքում 250,000 դրամի չափով էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների համար, պայմանագիր N 2017/601 կնքված 14.06.2017 թ. «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի և Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի միջև: Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում 01.01.2021 - 31.12.2021 թվականի ընթացքում 2,000,000 դրամի չափով ավտոմեքենայի վառելիքի ձեռքբերման համար, պայմանագիր կնքված 22.10.2020 թ. «Ֆլեշ» ՍՊԸ-ի և Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի միջև: Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում 01.01.2021 - 31.12.2021 թվականի ընթացքում 1,000,000 դրամի չափով գրասենյակային պիտույքների ձեռքբերման համար, պայմանագիր կնքված 30.10.2020 թ. «Սմարթլայն» ՍՊԸ-ի և Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի միջև:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի սպասարկման համար ծախսվելու է 5,650,000 դրամ՝ ծրագրի ընդհանուր արժողության 7.7 %-ը: Ծրագրի սպասարկումը ներառում է ծրագրի ղեկավարի աշխատավարձ 2,400,000 դրամ կապի ծառայություն 250,000 դրամ ավտոմեքենայի վառելիք 2,000,000 դրամ գրասենյակային պիտույքներ 1,000,000 դրամ
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Սույն ծրագրի իրականացման շրջանակներում ՀՕՖ-ը համագործակցում է՝ 1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, 2. Տեղական ինքնակառավարման մարմինների 3. Հայ Առաքելական Եկեղեցու Արարատյան, Շիրակի, Սյունիքի, Տավուշի, Արցախի և Վիրահայոց թեմերի հետ

13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Վերահսկողությունը կատարվելու է ՀՕՖ-ի հոգաբարձուների խորհրդի կողմից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ